



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzorcity@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2013 թվականի թիվ 62-Ն

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՆԵՑՈՒԿ ՀՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝
Վանաձոր համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Տալ համաձայնություն ստեղծելու Վանաձորի քաղաքապետարանի «ՆԵՑՈՒԿ ՀՁ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «ՆԵՑՈՒԿ ՀՁ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել Վանաձորի քաղաքապետին՝ կնքել «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության և Վանաձորի քաղաքապետարանի միջև պայմանագիր:

ԿՈՂՄ(13)

ԴԵՄ(0)

ՁԵՌՆՊԱՀ(0)

Գ.Քալանթարյան

Ա.Հարությունյան

Ս.Ղամբարյան

Ս.Աղաբեկյան

Ա.Ափինյան

Խ.Վարդանյան

Ա.Գրիգորյան

Ա.Մատինյան

Վ.Դավիթբաժյան

Գ.Շահինյան

Ա.Փելեջյան

Վ.Դոխտյան

Ս.Հակոբյան



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Վանաձորի համայնքի ավագանու

<< 25 >> հուլիսի 2013թ.-ի

թիվ 62- Ն որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**ԿԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆԵՑՈՒԿ ՀԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «ՆԵՑՈՒԿ ՀԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ կազմակերպություն/, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որն իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի ստեղծումը, նրանց ընդգրկումն ու ինտեգրումը՝ որպես մարդու հիմնարար իրավունք:
- 1.2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է միջազգային իրավունքի նորմերով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
- 1.3. Կազմակերպության գտնվելու վայրն է (Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 22):
- 1.4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 1.5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
- 1.6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
- 1.7. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
- 1.8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
- 1.9. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը Վանաձորի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող համայնքային գույքի պահպանման և սանաքրման աշխատանքներ իրականացնող ձեռնարկության հիմնումն է՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի ստեղծման, նրանց ընդգրկման, և ինտեգրման նպատակով:

2.2. Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

2.3. Կազմակերպությունը, համագործակցելով միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների, հաշմանդամների հասարակական կազմակերպությունների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, զբաղվածության պետական գործակալության տեղական մարմինների հետ, իր առջև խնդիր է դնում՝
ա/ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված աշխատատեղեր,
բ/ բարձրացնել հանրային իրազեկությունը հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության և այլ հիմնախնդիրների վերաբերյալ,
գ/ հետամուտ լինել ստեղծված ձեռնարկության պատշաճ շահագործմանը և հետագա գործունեության ապահովմանը
դ/ զարգացնել և ընդլայնել ձեռնարկությունը՝ ստեղծելով հաշմանդամություն ունեցող անձանց համար նոր աշխատատեղեր:

2.4. Կազմակերպության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, անձի ազատ զարգացման, հաշմանդամ անձանց հասարակությանն ինտեգրման սկզբունքների վրա:

2.5. Կազմակերպությունը պատասխանատու է հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիոլոգիական, հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված նրանց հակումների, ընդունակությունների, նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

2.6. Կազմակերպությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

3.1. Կազմակերպության կառուցվածքը, աշխատանքային ռեժիմը, հաշմանդամների աշխատանքային պայմանները, կազմակերպման կարգը որոշում է կազմակերպության հիմնադիրը պետական լիազոր մարմնի մեթոդական ցուցումներին համապատասխան:

3.2. Կազմակերպությունում աշխատանքներն իրականացվում է հաստիքային անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում կազմակերպության աշխատանքների որակի համար:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ կազմակերպության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

4.2. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.3. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա) ավագանու համաձայնությամբ կազմակերպության հիմնադրումը,
բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
գ) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

- դ) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
- ե) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,
- զ) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը,
- է) կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
- ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

4.4. Համայնքի ղեկավարն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.5. Համայնքի ղեկավարը՝

- ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- բ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ.
- գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.
- դ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
- ե) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.
- զ) համայնքի ավագանու որոշմամբ՝ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
- է) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը .
- ը) իրականացնում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

4.6. Տնօրենն՝ օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4.7. Տնօրենը՝

- ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.
- բ) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
- գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
- դ) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր
- ե) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
- զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
- է) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- ը) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
- թ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
- ժ) կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում է հիմնադրի հաստատմանը.

4.8. Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

4.9. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

5.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

5.3. Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

5.4. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

5.5. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

5.6. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

5.7. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

5.8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

5.9. Կազմակերպությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

5.9.1. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.
ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.
բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

5.9.2. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: